

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փոփոխ

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԹՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.
Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԴԻՊՏՈՒՆ ԶԱՄԱՆ

Տարեկան	ՂՂ. ողջ	400
Վեցամսեայ	»	55
Եռամսեայ	»	30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան	Փր.	26
Վեցամսեայ	»	14

ԵՏ ՁԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՆՈՒՄ

ՈՆԻ Է ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱՄԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳԵԱՐԹԻ ԵՒ ՇՈՒՄԱՐՈՒՆԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱԼՓԻՍԻ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

(Շարունակութիւն Ոսկորի թիւէն)

Այո՛, ինչ է պատճառը որ ասանկ խեղճ և լքեալ կացութեան մը մէջ ձգուած է ազգային կրթական հարցը:

Պատճառներուն զլխաւորը սա է թէ՛ ազգային իշխանութեան աս կամ ան ճիւղին մէջ գտնուող վարիչները երբէք իրենց տրուած պաշտօնին մարդը չեն եղած, երբէք չեն գիտցած թէ ինչ է իրենց պարտականութիւնը, և երբէք ինքզինքնուն չեն տուած օգտակար ըլլալու ներդրումը:

Ասոնք իշխան, թաղական կամ հոգաբարձու եղած են՝ ինչպէս մարդ աւարտը կը լլայ, Հէլլանի բիւրոսն կը վաստկի, Կլիսոն կը վաճառէ մը Կիլիսիայ, և կամ կաթնաճաճար կը լլայ փողոցին մէջ:

Դիպուածի, բաղդի, կողմնակցութեան խնդիր ամենքն ալ:

Իր ազգականներէն կամ բարեկամներէն մէկը ժողովի մը մէջ՝

—Գրեգոր աղայր սա աղայր, լսած է, որովհետեւ ատ Գրեգոր աղային կամ պարտը ունի և կամ առնելը ունի անկէ:

Եւ աս տեսակ երանելիներ օրինակէ կը թաղական կամ հոգաբարձու եղած քն երբ... Ժամկոչ ըլլալու անգամ արժանի չեն, որովհետեւ մեզի համար, հարուստ, պատուաւոր և կամ խղիւղաւ ըլլալը, բաւական յատկութիւններ չեն ատենցմէ հոգաբարձուի մը կամ քաղաքական ժողովի անդամի մը ատաղճը հանելու համար:

Հայաստանին ո՛ր ըլլալը, կաթողիկոսին ո՛ր ըլլալը, քերականութեան ինչ ըլլալը, ժողովի մը ինչպէս ըլլալը և սահմանադրութեան երբ չենուած ըլլալը չգիտցողներ մեր ազգային իշխանութեան մէջ այնքան շատ գտնուած են որքան այսօր հրապարակին վրայ շատ կը գտնուին... սիլիֆ հինգնոցները:

Վաշխառութեան և կամ ոսկերչութեան մէջ զիկզակ ճամբաներով հարստացած սխրի մը հետիւններ և քերականութեան և կամ քաղաքական ժողովի անդամ՝ եղած են, երանելի ժամանակներու մէջ և ազգային գործերը այն զիտակցութեամբ վարած են որ

ըով դիմացդ ելող առաջին Պերպերին պիտի վարէր... Ծօրէյն Օժիւր Անգլիոյ:

Ձառքի խելքը բաւական չէ վարելու համար ազգայնոց ընդհանուր գործերը որ հաւաքածոն է պատուոյ, բարեկեցութեան, օրէնքի, լուսաւորութեան, խղճմտանքի, արժանապատուութեան, ընկերականութեան, ազգային զգացումի, ազգային զարգացման, յառաջադիմութեան, ընտանեկան բարոյականի և ասոնց պէս բարձր հարցերու հետ խնամովի ունեցող այլազան խնդիրներու:

Ես երեսփոխաններ ճանչցած եմ որ՝ —Մէքթեպի և Եփրատի միջև, օ փառա իղէ Գրեգոր Թօնսիէ աղայր, առաջարկած է ժողովի մը մէջ:

Ուրիշ մը, ասկէ չորս տարի առաջ, թրամվէյին մէջ —տեսէր տեղն ի տեղը կը պատմենք կոր— աներեսութիւնը ունեցած է այս տողերը գրողին երեսն ի վեր պոռալու... դերմանական պաղարիւնութեամբ մը՝

—Եյ ճաշը, Առաջնորդ և Եյ օշաճագ, իշխէ Անաւայի վար ետքիշի:

Այս կերպառէն երեսփոխան կը ձևով, յանուն Աստուծոյ, դուր ըսէր:

Հետեալը շատ զարմանալու չէ երբ դպրոցները այն վիճակին մէջ կը գտնուին ուր կը գտնուին —գոնէ մենք այնպէս կ'երեւակայենք— Պուխարայի դպրոցները:

Գալտեան վարժարանի հաստատման թուականէն ի վեր մէկ հասաշակէր չէ եղած որ հայերէնը անսխալ գրելը ստիպած ըլլայ:

Եւ այս արդիւնքը ձեռք բերելու համար երեսուն հազար ոսկի վատնուած է:

Մինչև երբ պիտի տես այս կացութիւնը:

Կը հասկնանք որ ասկէ տաս տարի առաջ Գահիրէի էն խելացի, էն բանիւրուն մարդերը խան-խալիլ անկիւնները կը բուսնէին. բայց այդ թուականէն ի վեր շատ ջուր անցաւ կամուրջին տակէն և այսօր Գահիրէի Հայ գաղութին մէջ բազմաթիւ են այն անձերը որոնք իրենց վրայ կը միացնեն պահանջուած բոլոր պայմանները:

Եւ ասոնք Առաջնորդարանի շրջանակէն դուրս կը ձգուին, ինչպէս էրիկ

մարդիկ ներս չեն առնուիր կիներու բաղնիքին մէջ... ամօթնին մէջտեղ չի հանելու համար:

Սուլթան Համիտի բեթիմին պէս, հաստեղի բեթիմն ալ պէտք է վերջ գտնէ ինչ չուզուի ծովը թափել այն ոսկիները որ լաւագոյն բաներու սահմանուած են:

Հազարաւոր և հազարաւոր ոսկիները որ գրեթէ կէս դարէ ի վեր տարուէ տարի ազգային անտուկէն անցեր են, ինչ բանի օգտակար եղած են, կը հարցնենք:

Այդ խոշոր գումարներով հիւանդանոց մը չի կա՞ծ, կ'է. վարժարան մը, կ'է. աղբատ տղաքներէն գոնէ հատ մը Եւրոպա դրկա՞ծ են, կ'է. ընթերցատուն մը ունի՞ն, կ'է. արուեստանոց մը, կ'է. կիւրորդին դրամ դրկա՞ծ են, կ'է. վառայ սովեւը օգնութիւն մը ըրա՞ծ են, կ'է. բնակուելիք Առաջնորդարան մը ունի՞ն, կ'է. ազգային հանգանակութեան մը մասնակցա՞ծ են, կ'է. նոր կառուածներ գնա՞ծ են, կ'է, վերէն ի վար կ'է, կ'է, կ'է:

Ասկէ 10—15 տարի առաջ ըիշ մնաց քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցին պիտի փլէ՛ր եթէ գիշեր մը՝ Օբէրայի թատրոնին մէջ ֆրանսուհիներ խաղացնէրու փաթթուած և անգլուհիներ սուրիացիներու հետ գիրկընդառն՝ լանսիէ մը չի պարէին... ի նպաստ հայ գաղութին եկեղեցւոյ նորոգութեան:

Ամբողջ եղածը՝ բանի մը տղբատ ընտանիքներու տրուած պատպա մը հացն է, բարեգործութիւն մը որմէ ամենէն շատ օգտուողները ապահովապէս ճշմարիտ տնանկները եղած չեն:

Ո՛ր և ինչի՞ գացած է այսքան դրամ:

Գէշ վարչութիւն մը, յոռի տնտեսագիտութիւն մը գողութեան տակ զնաւակար է երբեմն:

—Էյ, ստակ չենք ուտեր կոր ես! Ահա՛ իրենց ամբողջ արդարացումը և ասիկայ անանկ պարծենկոտութեամբ մը կ'ըսեն որ մարդու ջիւղերը ոտք կը հանեն:

Երբունէ ի վեր է որ գող չըլլալը՝ յատկութիւն մը և կամ առաքինութիւն մըն է պատուաւոր մարդոց աշխարհին մէջ:

Եթէ իրենց դրամ չուտելը այդքան նշանաւոր պարագայ մըն է ինչու ուրեմն սա տեսակ այցեւորներ չենել չեն տար կոր:

Արիստոյն Նաքուզդոնուսուրեան ՊԱՏՈՒՄՈՐ ՄԱՐԻ:

Պատուաւոր ըլլալը, ինչպէս ըսինք, չի նշանակիր թէ ամեն բանի խելքերնիս կը հասնի:

Անանկ համայնքի գիտեմ որ կեանքերնուն մէջ տաւը փարայ անգամ չեն գողցած, պատուաւոր են մինչև երկունգնուն ծայրը, սակայն սաոր համար թաղական ընելու է ատմարդերը:

Ձէ՛, տիարք, այս անհոգութեան, այս անխիճ ընթացքին, այս անդրջնգեղեցիկ ուղղութեան դարման մը փնտռելու է:

Հոգ չէ՛, անցեալը մոռնանք, ճանչնանք մեր յանցանքները, բարեշնչելու կամ ցոյցնենք, աշխատենք, միանանք և հաւատացէք որ հրաշքներ ընել կարելի է այս երկրին մէջ ուր դերք մը ունինք, ազատ ենք, բարձրաստիճան անձնաւորութիւններ ունինք մեր զուլսը, գործունեայ, բանիմաց մարդեր շատ կան հիմայ մեր մէջ, և որ աւելին է դրամ ունինք, դրամ նախ դպրոցի խնդիրը ձեռք առնենք:

Ինչ պէտք է ընել մեր դպրոցները բարեկարգելու համար:

Յ. Ա.

(Շարունակելի)

ՄԱՐՏ

(Շար. Ոսկորի թիւէն և վերջ),

Աստե անցնելով մարտին պատճառած այս սարսափը և անոր մեկնելէն ետքը իրենց զգացած անհուն ուրախութիւնը իրենց տուն տուած էին մէկ երկու տարիներ, կամ արարողութիւններ, զոր կ'արժէ յիշատակել: Մարտը թշնամին էր, հոգեաւոր, չար ոգին. պէտք էր ուրեմն ամեն ատեն ուրնէ աւելի խելքով և եռանդով կոռել անոր վէճ, բազմապատկել զգուշութիւնները, ազգագիտական և այլ հնարքները: Մարտէն գոնէ շարաթ մը առաջ՝ Էրիկ կնիկ կը քաշուէին իւրաքանչիւրը իրեն սենեակը՝ և ամբողջ մարտ ամիսը հոն կը մնային ամբողջով: Դրսի խնթ օգրէն բան մը չէր կրնար ներս սպրդիլ: Պատուհաններուն ծակախիցները մեծ խնամքով գոցուած, փառաւոր

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ — ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

կրակ մը, մշտաբար, տաքութիւն ու կակուղ անկողին մը, թէյը, կաթը, ապուրը կ'ըստեղծէին իրենց շուրջը տաք, շոգելից ու ճարճաւոր մթնոլորտ մը որուն բարու թնամը մէջ մնալու ու կոնծած էութիւններն կ'ընդլայնէր ու կը լողար հեշտութեամբ: Անդադար կը հարցնէին իրենց զաւակներուն, թոններուն, «ՏԱՆԱՆ քանի՞ օր կայ, քանի՞ օր մնաց խնթին երթալուն...»: Ասանկով իրաւ է որ մարտը երկայն կը ըջէր և ուշ կ'երթար, բայց մէյ մը «ըրթար» ան ինչ անճառելի սուրբութիւն էր, յաղթութեան, ազատութիւն ինչ «օխ» մը: Երբունիները կ'ապաւնէին որ մարտի ամեն հետք ջնջուէր օդին մէջէն և դուրս կ'ելլային սենեակէն՝ նախ զիրար տեսնալու համար: Իրարու գիրկ կը նետուէին լայով խնդալով, զիրար կը պազնէին, կը գոռէին մահուան վտանգէն մագապուր ազատած մարդերու պէս: «Գնաց խնթը... աս ալ անցուցինք... աղէկ ազատեցանք... վախերնիս մեղի մնաց... տարի մըն ալ վաստակեցանք...» և ասոնց պէտ շատ մը կիցկուտը խօսքեր: Այնչափ բուռն, տղայական էր այս երկու ալեւոր ամուսիններուն ուրախութիւնը, և այնքան խոր ու մարդկային ըրածունն իմաստը, որ իրենց ընտանիքէն այս տեսարանին ներկայ գտնուողները չէին գիտեր թէ յուզուիլ ու լալ պէտք էր վերը ըսածներուն համար՝ թէ բալութեամբ խնդալ պեղակատարներուն ու իրենց շարժմանց բարձր կատակերգութեանը համար: Միջինը գտեր էին, կը ժպտէին...:

Ասկէ վերջը կուգար մեծ արարողութիւնը, զոր ամեն տարի կը կատարէին տէրու նախկին տօնի մը վայել ճշգրտահանութեամբ ու շքեղանքով: Ահա՛ թէ ինչ էր ասիկա: Տանը վերի յարկը «Թախթապօշ» մը ունէին, բաւական մեծակ, որ ձորի մը վրայ կը նայէր, բարձրադիր: Սկզբները, մահուան դէմ իրենց մաքառումին առջի տարիները, երբեմն այլը և կիներ, զատ կամ միասին, մարտը երթալէն ետքը հոն կ'ելլային՝ ընչ մը ազատ ու մաքուր օդ շնչելու համար, «արևի երես տեսնալու» համար: Մարդը, երբեմն մարտին ետեւէն քանի մը խօսքեր կ'ըսէր, մեծ մասը տաճկերէն, որոնք աւանդական են արևելքի մէջ. «Մարտ... Աճճճ յաւմուրդը»-ի պէս ծանօթ խօսքեր: Կինն ալ կ'ընկերանար, և էրեկ կնիկ կը խնդային, կը կատակէին: Բայց կամայ ակամայ՝ խնդիրը փոխուեցաւ: Կրկնուելով, կրկնուելով, ինչ որ առաջ պատահական կողմանէ, և իր մտածման մէջ կանգնող այդ պատկերին հանդէպ, զարմացաւ վիշտի պէս բան մը զգալուն: Ինքզինքն չէր մեղադրեց իրեն մէջ արթնցող տարօրինակ զգայութեան համար: Երբեք չէր կարծած որ ան զինքը սիրէր, հազիւ թէ նշմարած էր զինքը հոգ ընելը, և ահա... սիկ՝ այս վայրկեան ի երբ Սթա Ապուհա այդ բանը իրեն կը յայտնէր, ի բաց առեալ այն ցատուը զոր այդ յայտնութիւնը պէտք էր որ իրեն պատճառէր, անսահման ցաւով մը կը լեցուէր այդ մարդուն համար այնչափ ընչ կարեւորութիւն ունենալուն համար, ամօթ կը զգար կարգ մը ուրիշներու հետ բախտակից ու վիճակակից ըլլալուն և անոր մէջ արթնցնելուն համար միևնոյն ցանկութիւնը, միևնոյն լպիւր սքանչալութիւնը զոր ուրիշներ ընդունած էին: Բարեկամութիւն մը զինքը կը խեղդէր, իրեն ճշմարտութիւնը իր աչքերէն կը սքո-

տահական զբօսանք մըն էր, սովորութիւն զարձաւ, տիրական պէտք մը: Իրենց ծերութեան հետ՝ որքան աւելի կ'աճէր մարտն զգացած վախերնիս, այնքան աւելի տարուէ տարի կը սաստկանար «խնթը»-ին մեկնութիւնն առթած ուրախութիւնը, և եկաւ օր մը որ այդ ուրախութիւնը իր արտայայտութեան պաշտօնական ձեւը, հանդիսաւոր արարողականը գտաւ «Թախթապօշ»-ին այդ տեսարանին մէջ, բայց կատարելութեան հասած՝ ճոխացեալ և յաւելեալ: Մարտը անցնելէն ետքը՝ կ'ապաւնէին ասակ աղուոր օրուան մը ուր արեւը մեծապանծ ու տիեզերապաշտպան հօր մը պէս նախագահէր, միջոցին լոյսով ու ջերմութեամբ շան սատակ հանելով օդաշնչիկ հարբուխներն ու տենդերը, մարտածնունդ սատանորդները որոնք Գեորգ Ալայիս և Թաքուկ Տուտուիս կեանքին դէմ ի գուր դաւեցին ամբողջ ամիս մը... Թե թեկ, իրարու կը թնջնայ, զիրար բռնելով, կ'ելլային «Թախթապօշ»: Հոն, տեսնելու բան էր ալ. տղաքներու պէս, և իրենց կիտու ծանգեցուն ներածին չափ կը ցատկուէին: ձեռք, զուլ, լեզու կը շարժէին: Ինչէր չէին ըներ, ինչէր չէին ըսեր մարտին դէմ: Անոր ընթին կը խընդային, լեզու կը հանէին անոր, կը թըքէին անոր ետեւէն, մուր կուտային ափերով, կից կուտային յատակին: «Հէ՛, շունշանորդի՛, աորի մի երկուքին մէկը... խնթը շուն, ուրկէ եկար Աճճ հոն գնա՛, երթաւ բարով, մէյ մըն ալ չի գա», ասքղ կուտի Տէ՛ ճամբան մնա... գետնին տակը անցնիս ինչալլան... աշխարհիս վրայէն զիր... միջոց վերնայ Բի մենք ալ յաւաքընալ... օխ... ետեւի վրայ նայելով ետ կը դառնաս կոր ետ... անգի յալպէջ կուզէ՛ր կոր հէ՛... քեզի կ'իտի շուն քեզի...»:

Այսպէս կը ծանրէին Մարտը: Անգամ մը ևս իրենց կեանքի պայքարին մէջ՝ մահուան յաղթած ըլլալու, զայն խաբած՝ չըսեմ Երազատիկ՝ բայց գոնէ տարի մը ևս ետ մը՝ դաժ ըլլալու չարամիտ ուրախութիւնն էր որ կը յորդէր իրենց խօսքերուն ու շարժումներուն մէջ՝ և կուտար այս զանշտին զոր ամեն տարի կը ներկայացնէին՝ խորհրդանշանի մը իմաստն ու արեւը և կարծես՝ ձեռք մը — ո՛ր կը ծնէին... — նուիրական նկարագիրը:

Եկաւ վերջապէս վերջին Մարտը, ուր իրենց վախը պիտի իրականանար: Սենեակները բաշտուէին քանի մը օր ետքը՝ նայիս գէշ վիճակի մը մէջ ինկան երկուքն ալ:

Գէշն յոռեգոյն գացին, հոնկէ ալ ուրիշ տեղ երթալու համար: Ահադէն հարբուխ մը խուժեց վրանին, քանդիչ, անդամազրկի: Գիղջուկ հնաւորը տունին մէջ կատարած հազիւ ձայններ լսուեցան խորունկ ու խուլ անտառի մը մէջ զիմացկուն ծագի մը արըւած տապարի հարուածներուն պէս, կամ ինչպէս փշուղներու բրիլի զարկեր գետնափորի մը մէջ: Չգացին իրենց կեանքը որ շունչ առ շունչ, բոց առ բոց կը մարէր: Կիներ ասալ մեռաւ: Իր վերջին մտածումը եղաւ «Գեորգը միտակը պիտի երթայ «Թախթապօշ»...»: Տնեցիները ալ մէկուն և ոչ միւսին հաղորդած էին բնականաբար իրարու վիճակը: Երեք օր ետքը մարդը մեռաւ: Իրեն ալ վերջին մտածումը «Թախթապօշ»-ին գնաց: «Թաքուկը պիտի երթայ միտակը»: Իր ցաւին մէջ միտակարարութիւն մը եղաւ մտածել թէ ինք մեռնելէն ետքը՝ իր կիներ պիտի մնար գետ ողջ՝ շարունակելու համար սուրբ աւանդութիւնը, պատարագելու ի փառս կեանքին, և մահուան ու մարտին ընթին խնդալու համար:

«Միտակը պիտի երթայ»:

Երբ գոյի և մարդասպանի պէս՝ մարդը տունէն մեկնեցաւ՝ ոչ ոք ելաւ «Թախթապօշ»ը զայն ճամբայ դնելու: Ճակատագիրը երբեմն աւելի իմաստուն իր կարգադրութեան մէջ քան մարդիկ իրենց իղձերուն, իրենց առաջարկածէն աւելի լաւ տնօրինած էր:

Մ. Ս. ԿԻՐՈՅԱՆ

ՏԱՃԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՊԱՆՏԱՅԻ ԵՐԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ. — Կ. Պոլսէն բարիգեան Թամ լրագրին ուղղուած նամակէ մը կը քաղենք սոյն խնդրին վերաբերեալ հետեւեալ շահեկան մանրամասնութիւնները:

Ահաւասիկ այն պայմանները զորս Անատոլի երկաթուղիներու ընկերութիւնը ներկայացուցած է հանրային գործոց նախարարութեան հաճութեանը:

Երկաթուղիին գիծը պէտք է մինչև Գոնես երկարի, ճամբան վրայ հանդիպելով Էրէկլի, Ատանա, Համիտի, Թէլ-Հապէշ, Հարան Ռադ-Էլ-Ան, Հալէթ, Նիսիպի, Թէլ-Ալթին, Սուսուլ, Թէքայի, Սատիս, Տէ, Պաղտատ, Բերպէլ, Նէտէֆ և Զօպէր: Գիծը հետեւեալ ճիւղաւորութիւններ պիտի ունենայ. Համիտէն՝ Գոսթաւուլ, Թէլ-Հապէշէն՝ Հալէպ, զիւր չորոշուած կէտէ մը՝

զէր, իր մտածութիւններուն բաւիղին մէջ, ինչ բաղձացած չէր գիտէր:

Մի գուցէ սակայն Սթա Ապուհա ուստ խօսած ըլլար... մի գուցէ, Թէրմէնի վրայ ունեցած սէրէն կուրացած, այս բոլոր բաները երեւոյթացած ըլլար... Եւ անմիջապէս, իր այս ապարանքը գալուտը, Մուրատի հետ ունեցած իր առաջին տեսակցութիւնը յիշելով, վերստին կսկէր տարակուսիլ:

Չէր կրնար համոզուիլ թէ այդպիսի մարդ մը իրեն հետ գրօնուիլ ուզած ըլլար. բայց ինչպէս կ'ըլլար այս... Ինչո՞ւ Հապա եթէ իրաւ զինքը կը սիրէր, եթէ ինքը, խեղճ շոր աղջիկ, անոր կեանքին բովանդակ առարկան ըլլալու աստիճան անոր հաճելի եղած ըլլալու չարաբաստութիւնը ունեցած էր... Ասի ալ աւելի գէշ էր:

Իր վախկան միտածութիւններովը և յըստականութիւններովը Գահրէն եկող տղէտ

Ուրֆա, Սալիմէն՝ Հանէքին, Զօպէրէն՝ Բազմիէ, Բազմիէն՝ Գոնէլի:

Ընկերութիւնը իրաւունք պիտի ունենայ Մարաշի, Այնթապի, Պիլէնի, Մարտի, Նի, Էրպիլի, Տիալի, Հիթի ճիւղաւորումներուն, ինչպէս նաեւ Հալէպէն մինչև ծովափ գացող թրամվէյին կամ երկաթուղիին շահագործումը ուրիշ մը յանձնել:

Ասկէ ի գաւ ընկերութիւնը կը պահանջէ Դաթ-Էլ-Արապի Տիգրիսի և Եփրատի վրայ նաւարկութեան մենաշնորհը, Պապաի, Գաթաֆաֆի և Գաթաֆի մէջ նաւահանգիստներ շինելու արտօնութիւնը: Կը պահանջէ գոյն երկու կողմը 20 մղոնի տարածութեան մէջ գտնուած բոլոր հանքերը որոնք գետ չեն շնորհուած ուրիշ մը, ո՛րէն նիթի վրայ մաքսային տուրքերու ջնջումը: Պոլսէն Հայտարար փաշա շոգնաւային երկաթուղիներուն մը ճամբորդներու և ապրանքներու համար: Ասոնցմէ գաւ ուրիշ պահանջներ ալ պիտի ըլլան սակայն նուազ կարեւոր:

Ընկերութիւնը արտօնութիւն պիտի ունենայ բոլոր այս գիծերը բանեցնելու 99 տարի:

ԲԱՆԱԲԱՍԱՆ ԱԶԽԱՐԱՆ

ԱՆԻՇԻԱՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՅԻՆԱՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ. — Գրեթէ ապահով է որ ցօնկրէն յառաջիկայ նստաշրջանին միջոցին ունէ օրինական միջոց ձեռք չի պիտի առնուի անիշխանականութիւնը ջնջելու նպատակով: Միացեալ Նահանգներու սահմանադրութիւնը հիմնուած է խօսքի և ժամուրի ազատութեան վրայ: Որպէսզի այս ազատութիւնը կարիք ըլլայ սեղմել պէտք է բուռնաբար տալ օրէնքի փոփոխութիւն մը որ կը յեղաշրջէ սահմանադրութեան հիմքերը: Եւ որպէսզի այսպիսի փոփոխութիւն մը բուռնաբար պէտք կայ մեծամասնութեան մը որուն վրայ շատ վրասահելու է: Իրօք, ո՛չ ցօնկրէն, և ո՛չ ալ օրէնսդրական ժողովները պիտի ուզեն բուռնաբար օրէնք մը որ կը սահմանափակէ բանախօսի ազատութիւնը:

Ասկէ ի գաւ դահլիճը բացարձակապէս կը հակառակի միջազգային համբարշտութեամբ մը անիշխանականութիւնը հաստատութիւնները քանդելու առաջարկին:

ԱՆԿԻՈ ՊՈԵՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՄԸ. — Երկամական նախարարը Պրիսթօլ արտասա, նաժ ճառի մը մէջ, յայտարարեց թէ մեծագումար փոխառութիւն մը եղած է պատերազմը շարունակելու համար, փոխառութիւն մը որ շատ չի խռովեց առեւտրական

փոքրիկ աղջիկը չէր այլևս Թէրմէն. այս տարօրինակ ոտուած ըրած էր, ոտուած Ատմբոսի մատուռէն բրէնս Մուրատի հարեմը: Արանները սարսաղացած, աչքերը փակուած էին լսելով կամ տեսնելով հրեշտակ բաներ, անպարկեշտ խօսակցութիւններ, նախ և առաջ հասկցուած ապրիտ արարքներ, յետոյ, կամաց կամաց, ծածկէր գլուխը, բան մը չսեղ կեղծելու, կարելի եղածին չափ մեկուսացած ապրելով, գոնէ շրթները և սիրտը սուրբ պահելով բոլոր պղծութիւններն, իր արժանապատուութեան բոլոր բարձրութիւնը և իր պայծառափայլ աչքերուն անմոռն ըմբոստացումը պատուար կանգնելով մոլորութեան և իրեն մեջտեղ:

Ինքը որ՝ թերևս անգոր և անտարակոյս շատ անճարակ պիտի ըլլար, Պրանսայէն նոր եկած ատենը, մեքենայութիւն մը ի

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»-Ի (22) ԺԸՆԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՏՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՈՒՄԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ 2.

Գիտէր նաև որ իրմէ առաջ եկող երեք զաստիարակութիւնները, մէկը յոյն և միւս երկուքը գերմանացի, երեքն ալ դէմ դրած չէին. նոյն իսկ Բրէնսին անոնց մասին ունեցած քննադատող այնչափ վաղանցուկ եղած էր՝ որ ինչպիսի նախանձը զանոնք հոգը ընելու ձանձրութիւնն իսկ յանձն չէր առած:

Թէրմէնի մտքն չանցաւ որ անոնցմէ ամբար յարգանքի մը պիտի արժանանար

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՄԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ՆԱԶԻԲԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԺԻԳԻԹԷ — ԳԼԽԱԿՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԹԻԹԷ ԵՆԷՔԷ

հրապարակը և նուազ միասակար եղաւ երկրին քան նախորդ պատերազմներ ետեւ- ջոցին: Ըսու թէ վստահ է որ ժողովուրդը հաճողով վճարեց իր վրայ դրուած տուր- քերը որովհետեւ հայրենասիրական խնդիր մըն է ասիկայ: Փափաք յայտնեց որ կարենար այս ահաւոր պատերազմին վերջը գուշակել, բայց ըսաւ որ անկարելի է: Եւ աւելցուց որ ժամանակ մը ետքը կարելի է ստիպուի տուր- քերու յատկումը պահանջել:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կ. Պոլսոյ Պատրիարք՝ Ամեն. Օրման. եան Սրբազան Հոկտեմբեր 1/14 թուա- կանաւ կոնդակ մը ստորագրած և ամեն հայրենակ երկիրներ դրկած է — հատ մըն ալ մենք ստացանք, վերջին թղթաբերով — որով հրաւեր կը կարգայ ամեն հայ ան- հատի անխափ, սատարել Ազգային Ս. Փրկչեան հիւանդանոցին, այդ Գլխ. թեան Տան, գնելով գոնէ հատ մը այն օրացոյ- ցէն որ Հիւանդանոցին Հոգաբարձութիւնը հրապարակ հանելու վրայ է տարեգլխոյ առթիւ:

Այդ կոնդակը այնքան յուզիչ շեշտեր կը պարունակէ իր մէջ և խնդրուած օգնութիւն- նը — անհատ զուտ քառասուն փարայ — այն- քան աննշան է որ, ըսաւ տարակոյս չկայ թէ աշխարհիս չորս զին գտնուող ամբողջ հայերը պիտի փութան հատ մը օրացոյց ունենալ գրպաննուն մէջ, ատով օժանդա- կած ըլլալու համար հաղաբարձ տնական- րու, հիւանդներու և որբերու պատսպարան եղող մեր Ազգային տունը փայլուն վիճակի մէջ պահելու գործին:

— Երեսփոխանական ընդհանուր ժողովը որ վաղը նիստ պիտի ընէր, եկող շաբթը- ւան յետաձգած է իր գումարման թղթականը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Աղեքսանդրիոյ բամպակի ֆաբրիկան մէջ կը խօսուի թէ այս տարուան բամպակի բերքը 5,500,000 քանթար պիտի ըլլայ, մինչդեռ անցեալ տարի 5,250,000 ե- ղած էր:

Բամպակի բերքը 6 ու կէս միլիոն քան- թար եղած էր 1669ին, 5,579,602 քան- թար 1898ին և 6,517,444 քանթար 1897ին:

— Շաբաթ օր Աղեքսանդրիա հասնող «Բէն Օլիա» առական թղթաբեր նաւը

դերեհ հանելու, հիմակ որ պիտի, ինքզին- քը արի կը զգար և պատրաստ այն պայ- քարին որմէ կը վախնար, բայց զոր պիտի կարենար մղել:

Մնաց որ, ինչու այսպէս առաջունէ ինքզինքը շարժարէր... Ան դեռ խօսք բա- ցած չէր... Թեքն երեք ալ չպիտի բա- նար, զսպուած այն պատկանանքով զոր կրցած էր անոր ներշնչել: Հրապարակ ու- զողները միայն կը հրապարակէին, բոլորը գի- տեր որ ժերմէն անոնցմէ չէր: Ասոր վրայ ապահով էր: Հարկաւ հանգիստ պիտի թո- զուր գինքը, և պիտի թողոր որ վայելէր իր պարտականութիւնը մինչև վերջը կատա- րելու գոհունակութիւնը, այս էր իր խնդրած միակ շնորհը, հարկաւ բաւական վեհանքն պիտի ըլլար ու չպիտի մերժէր:

ԳԼՈՒԽ Է.

Յաջորդ օրը ժերմէն Ֆրանսայէն նա- մակ մը կ'անէր, որ իր խոստանալ հո- ղին բողոքովին վրդովեց:

ստիպուեցաւ Մէքսի առջև երկաթ ձգել, Տաճկաստանէն եկած բերքերուն վրայ զը- ւած քարանձինային ենթակոծելու համար: Սակայն երկուշաբթի օր կէս օրէն ետքը քարանձինային վերցուեցաւ և ճամբորդներն իրիկուան դէմ կրցին ցամաք ելլել:

— Թղթատարական վարչութեան մէկ վի- ճակացոյցէն կը տեսնուի որ մինչև Հոկտ. ամսոյն վերջը, թղթատարական խնայողա- կան սնտուկին շրջաբերութեան հանած տո- մարներուն ամբողջական գումարը կը հաս- նի 5,834ի, որոնց 3,647ը տեղացիներուն յատկացուած է և 2,207ը եւրոպացիներուն: Աւանդ տրուած գումարներուն համագու- մարն է 67,867 եգիպտական ոսկի, և վը- ճարուած գումարներուն համագումարը 26, 709 եգիպտական ոսկի:

— Փողոցներու տեսչութեան պաշտօնէ- աւթիւնը վերջացուած է Թէֆլիցիէի կոյս- ղիներուն աշխատութիւնները: Հիմա կը մը- նայ Գլխ. Պէտքի ծառայողին ետին Խպտի թաղին մէջ հարիւր քառակուսի մէթը տա- րածութեան վրայ ջրանցքներ հաստատել: Այս վերջին աշխատութիւնները պիտի վեր- ջանան 15 օրուան միջոցին:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Լ ՈՒՐ ԵՐ

ԲԱՐԻՉ, 31 Հոկտ. — Գայեարի հրա- մանատարութեան ներքե արեւելեան ջորերը մեկնող նաւաբաժինը բաղկացած է երեք զրահաւորէ և երկու յածաւորակէ:

Ըստ «Ֆիկառօ»ի նաւատորմի դէպ ի Միտիլի կղզին կերթայ ուսկից կը պաշա- պանեն Տարտանսի անցքն ու իզմիրի ծո- վածոցը: Եթէ Սուլթանը տեղի չիտայ, ծո- վակալը Միտիլիի նաւահանգստին և մաք- սին պիտի տիրանայ:

Ուրիշ աղբիւրներէ անուած տեղիկու- թիւներու համաձայն նաւախումբը դէպ ի Սելանիք մեկնած է:

ՀՈՄՄ, 1 Նոյ. — Թրիպոլիսի զեր-ծո- վակալ Գայեարի ստացած հրամաններուն մասին «Ֆիկառօ»ի տուած տեղեկութիւննե- րը բացատրելով, կըսէ թէ բարեկեան թեր- թին մասնանիշ ըրած գրաւումը այնպիսի դէպք մըն է որուն մասին Խալիլոյ ան- տարբերութիւնը անարդարանալի պիտի ըլլայ:

ԲԱՐԻՉ, 1 Նոյ. — Գայեարի նաւաբա- ժինը կը բաղկանայ երկու զրահաւորէ, ե- րեք յածաւորակէ և երկու փոխ-յածաւո- րակէ: Բացարձակապէս գաղտնի կը պահ- ուի անոր ժամագրաւայրը:

Խորհրդարանին հակառակամարտ շրջա-

«Սիրելի թոյր», կը գրեն Մարսէլ, քեզ- մէ առած վերջին լուրերս, ճշմարիտը ըսեմ, բողոքովին չեն վստահացներ զիս: Առաջին օրերուն վշտաբեկութենէդ, հոգ ժամանելուդ ատեն ունեցած վճատութենէդ և տրամու- թենէդ վերջը, այսօրուան խանդավառութիւնդ կը վշտացնէ զիս և կը տագնապեցնէ:

«Անշուշտ երջանիկ եմ զքեզ երջանիկ տեսնելով, բու երջանկութիւնդ կ'անքնա- միակ ուրախութիւնն է, և հարկաւ կը բերկ- րիմ քեզմէ իսկ իմանալով որ, եթէ դուրի ես անկախութենէ, գոնէ կրցած ես, այդ կէս ծառայութեան վիճակիդ մէջ ուր ձգե- ցին զքեզ մեր դժբախտութիւնները, բացա- րիկ դիրք մը ստեղծել քեզի, հանգարտու- թեան ապաստանարան մը յօրինել և ա- պագայի քանի մը յոյսեր դեռ պահել. բայց ճշդիւ անոր համար որ կը ճանչնամ քու բարեմասնութիւններդ ու նկարագիրդ, այդ

նախերուն մէջ, նաւախումբին մեկնումը կը վերագրուի յառաջիկայ երկուշաբթի օր խորհրդարանին մէջ թուրքական միջադէ- պին առթիւ կատարուելիք բանակումին:

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 5 Նոյ. — Երանը կոխ- մը ծագեցաւ երկկ Ս. Գերեզմանի եկեղեց- ւոյն մէջ Լատիններու և Յունաց միջև: Հինգ ֆրանսիացիներ վտանգաւոր կեր- պով վիրաւորուած են, որոնց մէջ կը գըտ- նուէր մեծատորին փոխատըրը՝ ֆրանսացի մը: Կուին պատճառը այն է թէ Լատին- ները քանիցս փորձեցին աւելի եկեղեցիին մէկ մասը, ինչ որ մինչև այսօր Յունաց իրա- տունքն էր զոր ձեռքէ հանել չեն ուզեր:

Տաճկ զինուորներ քանի մը օրէ ի վեր տեղւոյն վրայ իբրեւ պահակ դրուած են կոնկերը արգիլելու համար, սակայն բան մը ընելու անկարող գտնուեցան կողաբար- ներուն յանկարծակի խուժելուն պատճա- րաւ:

ԼՈՆՏՈՆ, 4 Նոյ. — Այսօր վերջնակա- նապէս որոշուեցաւ թագաւորին նոր տիտ- ղօսը: «Թագաւոր Մեծն Բրիտանիոյ, Իը- լանտայի և անգլիական անդր-ծովային եր- կիրներու, պաշտպան հաւատքի և Կայսր Հնդկաստանի»: Կըսուի թէ «Կալլէտի իշ- խան» տիտղոսը ի մօտոյ վերստին պիտի գործածուի:

ԲԻԷՐՈՒՐԻՍ, 4 Նոյ. — Լուր կուտան թէ այսօր խել մը պղտիկ ճակատաւարտեր տեղի ունեցած են Պօլշներու հետ որոնք 50 հոգի կորուսին: Ամսոյս 1ին ասոնք վերջէսթերի մօտ 14 հոգինոց ջոկատ մը գերի բռնեցին:

ԲԱՐԻՉ, 5 Նոյ. — Կը ծանուցա- նեն թէ Գայար ծովակալը իզմիրի մարսերը գրաւեր է:

ՊԵՐՂԻՆ, 5 Նոյ. — Գերմանական մամուլը վերջին ծայր դժգոհութեամբ կը տեսնայ Սուլթանը ճամբու բերե- լու համար Ֆրանսայի առած որո- շումը:

ԲԱՐԻՉ, 5 Նոյ. — Գայեար ծովա- կալը հրաման ստացած է ցամաք զօրք հանել և գրաւել Միտիլիի եր- եք նաւահանգիստներն ու մարսերը: Ֆրանսայի միտքն է իր պահանջը- ները առնել անոնց եկամուտներէն և հաւանական է որ իր պահանջումնե- րը ընդունել տալէ ետքը ալ հոն չպիտի մնայ:

ՄԻՏԻԼԻ, 5 Նոյ. — Գայեար ծո- վակալին նաւախումբը հոս հասաւ:

ԲԱՐԻՉ, 5 Նոյ. — Գայեար ծովա- կալին նաւախումբը Միտիլի հասաւ,

խաղաղութիւնը յօրում կը տեսնեմ զքեզ, զքեզ վառող այդ գեղեցիկ եռանդը և (ա- մեն մէկ խօսքերուդ մէջ արտայայտուած) այդ կամքը զոր ունիս, ինչ որ ալ ըլլայ, այդ տանը մէջ հանդիստ ընելու, այս ա- մենը հոգւոյս մէջ կը դնե կասկած մը զոր հազիւ կը համարձակիմ յայտնել:

«Սիրելի՛դ, սիրելի՛դ Ժերմէն, այդպիսի փափկասիրտ ու այդպիսի խանդակալ, արդ- եօք պիտի վերադառնամ քեզ բողոք մտքէս անցածը ըսելով:

«Ինչ ընեմ, թոյր», սիրող ճմել ալ հարկ ըլլայ, յանուն մեր հանգուցեալ ծը- նողաց, ես, ընտանիքին պետը, բու միակ պաշտպանդ, բու միակ նեցուկդ, պիտի խօ- սիմ, եթէ պէտք իսկ ըլլայ յանդիմանու- թիւններ հրաւերել վրաս, եթէ պէտք իսկ ըլլայ արցունքներով լեցուած տեսնել քե- ղեցիկ աչքերդ:

հաւանորէն այդ կղզիին նաւահան- գիստներէն երեքը պիտի գրաւէ: Երբեք վրայ հրաման ստացածէ ու- ըրիշ միջոցներ ձեռք առնել, եթէ հարկ գատէ:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԷԹՈՒՂԹԻՔ

Աղեքսանդրիա, 5 Նոյեմբ.	
Բրիլիլէթիէ	99 1/2
Իւնիֆիէ	108 1/4
Տայիրա Սանիյէ	101 1/2
Տօմանեալ	105 1/2
Թրքական Բոնսօլիտէ, սեռի Շ	23 55.
Բուսէլի երկաթուղի	Ֆր. 97 /—
Քանալ տը Սիւէզ	» 3730 /—
Քանալ տը Սիւէզ օպիլիկ	» 645 /—
Նաշ. պանք օֆ Էնթրէք Ա. Ո.	» 11 /—
Աղեքս. Թրամվէյ (բրիլ.) ֆր.	» 46 1/12
Աղեքսանդրիոյ Թրամվէյ)	
(աքսիօն տիվիտանս	» 25 1/2
Քրէտի ֆօնդիէ եգ. աքսիօն	» 553 /—
Քրէտի ֆօնդիէ Յ Օ/0	» 263 /—
Ջրի Ընկ. Գահիրէ	» 630 /—
» Աղեքսանդրիա Ա. Ո.	» 35 7/8
» Թանթա	» 12 /—
Պէնէրայի անանուս ընկ.	» 48 /—
Ինիքլըն մարքէթս օպլ. 5 Օ/0	» 100 /—
» » աքսիօն	» 0. 16. 3
» սոլթ ընտ սօսա	» 0. 15. 9
Նունկուլիշ Օթէլս	» 4. /—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻՔ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 5 Նոյեմբ.	
Բամպակ. Նոյ. Թալր. 9	31/32 /—
» Յուն.	» 9 31/32 — /
» Մարտ	» 9 13/32 — /—
Պիզրէ. Նոյ. Դեկ. Յուն.	
Ղրուշ 61 35/40	/—
» ֆեռ. մարտ	» 62 3/4 — /—
» Նոյ. դեկ. յվ.	» 91 /— — /

Ա Ձ Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԵՏԷՐ ՓԷՇՏԻՄԱԼՃԵՄԸ, արեւելեան և եւ- րոպական երաժշտութեան մասնա- գէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշ- նակի դասեր տալ, նորագոյն մէթո- տով, իրեն զիմող աշակերտաց: Փափաքողները պէտք է զիմեն Տիար Ս. Մաճարեանի գրասենեակը, Պապ-Էլ-Հատիտ փողոց թիւ 31. 3—20

«Ես որ կեանքը քեզմէ աղէկ կը ճանչ- նամ, հիմակուան գաղափարներուդ ամբող- ջութեանը մէջ ընդունարեւ կարծեցի ձեզ- տուած մը, հակամիտութիւն մը սիրելու այդ բրէնսը որ քեզի համար օտարական մը միայն պէտք է ըլլայ միշտ:

«Թեքն, զեռահաս աղջկան տղիտու- թեամբդ, դու իսկ չես կրցած վերահասու ըլլալ քեզի պատահած բանին. նոյն իսկ թեքն ես ալ բու վրադ ունեցած սաստիկ սիրոյս զոհն եմ և կասկածներս անհիմն են... Երանի՛ թէ խաբուէի:

«Գեղանի ես ու բարեխիտ, բուրիկ, առաջունէ համոզուած եմ որ ուրիշէ մը աւելի ենդակայ պիտի ըլլաս գովեստներու, մեծարանքներու, նոյն իսկ յանդիմանու- ներու, որոնցմէ քեզ պիտի մնային քեզի չափ աղտոր չեղողներ: Այս ամենը դարձ- եալ ինծի երկիւղ չպիտի պատճառէր:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻՅԷԻ ՇԷՆՔԻՆ ԴԷՄ

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1893 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՉԱՐ ՖՐԱՆԴ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծաղրէ, խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւ այլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ, ճեղքելութեանց համար գիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԵՆՏԻՆ, Ընդհ. ներկայացուցիչը: Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալտար: Գ. ԵԿԱՒՈՅ ԴԵՐ-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԴ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԵ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ Կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եգիպտոսի և արաւ-սահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ չէքուած գրաւներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուծահանել կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՆՈՅ ԳԻՄ

ԵԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շտաբի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրէ, Խոյն, Մի. տիւր և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միւսըն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժա. մանակ կ'ունենան շոգենաները Բի. րէա հանդիպելուն, Աթէք այցելել:

ՍՈՒՐԻՆՈՅ ԳԻՄ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէր. սին և Իսկէնաբուլ:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միւսըն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 5ին:

Տասնընչիւ օրը անգամ մը՝ երթեւեկ կ'արար

Մոլու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԻ, ՍՈՒԱԲԻՆ, ՀՕՏԵՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանքաց համար գիմել Ընկերութեան Աղեք. ուսուցիչ, Բոն. Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուլի ամեն մասնաճիւղերուն:

1-1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՆԱԿԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՆ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԵՆՆԵՐՈՒ

ԼԵՒԶԻՐԷ, Մուսի փողոց,

Ս. և Ս. Յիսակի վանառանցի զեմը

Ապրանք զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճիւ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական

Շոնօկրաֆներու

Մաճոր: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԵՏԻ ՄՆԱԲ

ԱՐՄԱՐ

ՅԵՑՅԱԼ

ԲԱՐԻՉ

1900



ԱՐՄԱՐ

ԳԻՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՋԵՒՈՒԹԵԱՆ

ՉՈՓԱՆՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱԶԻՐԷ

ՌՈՒՍԱԿԱՆ

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՏԻՏԻՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՉՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԵՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաներով

ԱՆԲԱՐԷՐՈՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թօն. 5500	ՉԻՒԱՉՈՅ տարողութիւն թօն. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	ՉԱՐ " " 5500

ԵԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՆ ՍԱՅԻՏ, ԻՉՄԻՐ, ՏՍՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ՇՈՎՈՒ ԱՍԻԱԿԱՆ ԵՉԵՐԻՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՉՈՅԻ ՄԻՎ:

ԵԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՆ ՍԱՅԻՏ, ԵԱՅՈՒ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՄԻՆ, ԲԻՐՈՒ, ԻՉՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Թիքասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուել խտիվական Հրամանագրով
25 Յունիար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի գրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՈՒՄԱՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱՄԱՐՈՒԹԻՒՆ

Ստամբուլ. հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, որտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փախում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու դեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբուլային դեղերու նման չի խանդարեւ ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ:

12-316